

4.3. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.3.1 Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը. ԶԶ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-դեկտեմբերին, փաստացի գներով, կազմել է 639613.3 մլն. դրամ կամ 1182.7 մլն. դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 160856.0 մլն.դրամ (297.5 մլն.դոլար) և ներմուծումը՝ 478757.3 մլն. դրամ (885.1 մլն.դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 317902.3 մլն.դրամով (587.6 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնության կարգով ստացված բեռների՝ 276954.4 մլն. դրամով (512.0 մլն. դոլարով):


2000թ. հունվար-դեկտեմբերին, 1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 13.4%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 28.4%-ով, իսկ ներմուծումը՝ 9.1%-ով: Բացասական առևտրային հաշվեկշիռն աճել է 1.4%-ով: Արտահանման ծավալը 2000թ. դեկտեմբերին նույնների նկատմամբ աճել է 47.9%-ով, իսկ ներմուծումը՝ 13.6%-ով:

2000թ. հունվար-դեկտեմբերին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 130035.3 մլն.դրամ (241.0 մլն.դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 20.4%-ը (1999թ. հունվար-դեկտեմբերին՝ 23.35%), իսկ այլ երկրների հետ՝ 509578 մլն. դրամ (941.6 մլն. դոլար) կամ 79.6%-ը (1999թ. հունվար-դեկտեմբերին՝ 76.65%), որից Եվրամիության(ԵՄ) երկրների հետ՝ 221068.2 մլն. դրամ (409.6 մլն. դոլար) կամ 34.6%-ը (1999թ. հունվար-դեկտեմբերին՝ 34.2%):


2000թ. հունվար-դեկտեմբերին ԱՊՀ երկրներ են արտահանվել 39385.7 մլն. դրամի (72.8 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 90649.6 մլն. դրամի (168.3 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 51263.9 մլն. դրամով (95.5 մլն. դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 121470.3 մլն.դրամի (224.7 մլն.դոլարի) և ներմուծվել՝ 388107.7 մլն. դրամի (716.6 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 266637.4 մլն. դրամով (492.1 մլն.դոլարով):

1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատ 2000թ. հունվար-դեկտեմբերին արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 29.1%-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 28.2%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից նվազել է 10.1%-ով, իսկ այլ երկրներից աճել է՝ 14.9%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 1999 և 2000թթ. հունվար- դեկտեմբերին, ըստ ԱՊՀ և այլ երկրների Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՅԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը, հազ. \$
	Արժեքը		Տեսակ. կշիռը	Արժեքը		Տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	160856.0	297523.5	100.00	478757.3	885128.4	100.0	-587604.95
որից՝							
ԱՊՐ ԵՐԿՐՆԵՐ	39385.7	72771.2	24.46	90649.6	168272.9	19.01	-95501.72
այդ թվում՝							
Ռուսաստան	24140.8	44508.9	14.96	71181.9	132127.6	14.93	-87618.74
Թուրքմենստան	2992.7	5544.2	1.86	587.0	1089.4	0.12	4454.78
Վրաստան	8332.2	15448.2	5.19	10492.6	19536.0	2.21	-4087.78
Բելառուս	489.5	903.2	0.30	335.9	622.4	0.07	280.75
Ուկրաինա	1755.7	3271.0	1.10	6667.2	12321.7	1.39	-9050.69
Ղազախստան	687.3	1268.8	0.43	467.9	869.7	0.10	399.09
ԱՊՐ այլ երկրներ	987.4	1827.0	0.61	917.1	1706.1	0.19	120.87
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	121470.3	224752.2	75.54	388107.7	716855.5	80.99	-492103.23
այդ թվում՝							
ԵՄ երկրներ	57682.6	107014.1	35.97	163385.6	302609.1	34.19	-195595.02
Ավստրիա	4.7	8.6	0.00	1379.9	2554.7	0.29	-2546.07
Բելգիա	40410.7	75051.4	25.23	45426.7	84364.4	9.53	-9313.00
Ֆրանսիա	252.2	466.3	0.16	9515.5	17555.5	1.98	-17089.17
Գերմանիա	6971.9	12917.8	4.34	19630.3	36305.9	4.10	-23388.03
Իտալիա	1451.5	2683.1	0.90	13861.5	25687.3	2.90	-23004.22
Նիդերլանդներ	1434.2	2631.9	0.88	6651.3	12427.1	1.40	-9795.17
Մեծ Բրիտանիա	5449.3	10099.2	3.39	32241.9	59480.7	6.72	-49381.50
Հունաստան	1602.4	2963.1	1.00	29151.4	54003.0	6.10	-51039.93
Իռլանդիա	0.2	0.3	0.00	554.4	1026.9	0.12	-1026.61
Դանիա	0.0	0.0	0.00	757.9	1410.6	0.16	-1410.57
ԵՄ այլ երկրներ	105.6	192.3	0.06	4214.7	7793.1	0.88	-7600.76
Շվեյցարիա	4775.7	8829.9	2.97	12432.4	22918.1	2.59	-14088.17
Իրան	14973.3	27728.4	9.32	45558.8	82972.5	9.37	-55244.17
Թուրքիա	817.6	1507.6	0.51	21350.4	39481.7	4.46	-37974.05
Միաց.Արաք. Էմիր.	2965.8	5479.0	1.84	22512.8	41602.0	4.70	-36123.07
ԱՄՆ	20594.7	37870.4	12.73	55622.7	102675.0	11.60	-64804.62
Բուլղարիա	357.2	656.0	0.22	3900.4	7210.0	0.81	-6554.08
Այլ երկրներ	19303.5	35666.9	11.99	63344.7	117386.9	13.26	-81720.05

2000թ. հունվար-դեկտեմբերին արտահանման ծավալի 24.46%-ն ուղղվել է ԱՊՐ երկրներ (այդ թվում 14.96%-ը՝ Ռուսաստանի Ղազնություն, 5.19%-ը՝ Վրաստան և 4.31%-ը՝ ԱՊՐ մյուս երկրներ), 75.54%-ն աշխարհի այլ երկրներ, այդ թվում 35.97%-ը՝ ԵՄ երկրներ (որից 25.23%-ը՝ Բելգիա, 4.34%-ը՝ Գերմանիա, 3.39%-ը՝ Մեծ Բրիտանիա), 9.32%-ը՝ Իրան և 12.73%-ը՝ ԱՄՆ:

Ներմուծման ծավալի 19.01%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 14.93%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 80.99%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 34.19%-ը՝ ԵՄ երկրներին (որից 9.53%-ը՝ Բելգիային, 6.72%-ը՝ Սեծ Բրիտանիային), 11.6%-ը՝ ԱՄՆ-ին, 9.37%-ը՝ Իրանին և 4.46%-ը՝ Թուրքիային:

2000թ. հունվար-դեկտեմբերի արտահանման և ներմուծման ծավալներն ու տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹

(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզի /քաղաքի անվանում	Արտահանում			Ներմուծում		
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	Հազ. \$		մլն.դրամ	Հազ. \$	
Ընդամենը	157443	291214.1	100.0	456125	843161.9	100.0
ք.Երևան	95022.6	175650.6	60.32	347449.5	642126.9	76.16
Արագածոտն	673.5	1249.2	0.43	1559.2	2894.8	0.34
Արարատ	3681.3	6814.6	2.34	6405.1	11827.1	1.40
Արմավիր	486.8	896.7	0.31	4224.7	7783.3	0.92
Շիրակ	735.6	1357.1	0.47	7712.8	14262.5	1.69
Վայոց Ձոր	206.2	383.2	0.13	1244.3	2298.7	0.27
Տավուշ	136.3	250.2	0.09	140.0	258.9	0.03
Սյունիք	8820.8	16276.1	5.59	22285.4	41183.6	4.88
Գեղարքունիք	1536.4	2830.4	0.97	1716.0	3166.3	0.38
Լոռի	3210.7	5904.2	2.03	7439.6	13779.9	1.63
Կոտայք	42932.9	79601.8	27.33	55948.2	103580.0	12.28

2000թ.հունվար-դեկտեմբերի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 72.1%-ը (արտահանումը՝ 60.32%, ներմուծումը՝ 76.16%) իրականացվել է Երևան քաղաքում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 16.1%-ը՝ Կոտայքի մարզի և 5.1%-ը՝ Սյունիքի մարզի կազմակերպությունների կողմից: Հանրապետության մյուս մարզերում արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը, համապատասխանաբար չի գերազանցել 2%-ը:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ առանձին ապրանքախմբերի

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե- կշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Ս Ե Ն Ը	160856.0	297523.5	100.00	478757.3	885128.4	100.00	-587604.9
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	374.0	689.4	0.23	18148.9	33574.8	3.79	-32885.42
Բուսական ծագման արտադրանք	912.1	1681.8	0.57	53242.8	98498.3	11.13	-96816.51
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.2	0.3	0.00	9215.0	17082.8	1.93	-17082.51
Պատրաստի սննդի արտադրանք	14833.7	27337.3	9.19	37614.9	69535.6	7.86	-42198.36
Հանքահումքային արտադրանք	18546.2	34305.2	11.53	98778.1	181798.1	20.54	-147492.83
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1810.3	3373.3	1.13	44590.5	82382.1	9.31	-79008.82
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	4896.5	9048.9	3.04	12544.1	23151.8	2.62	-14102.90

¹ Արտահանման և ներմուծման ծավալների բաշխումն ըստ մարզերի, իրականացվել է համաձայն կազմակերպությունների տնտեսական գործունեության իրականացման վայրի՝ ՀՀ պետական տնտեսության նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա:


	ԱՐՏԱՐԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե- կշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ք Ղ		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	770.1	1420.9	0.48	862.2	1590.1	0.18	-169.17
Փայտ և փայտյա իրեր	473.3	871.9	0.29	2617.9	4844.1	0.55	-3972.20
Թուղթ և թղթից իրեր	227.2	418.6	0.14	12474.4	23059.1	2.61	-22640.44
Մանածագործական իրեր	7143.5	13184.4	4.43	17238.5	31853.4	3.60	-18668.93
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	515.9	952.1	0.32	2875.8	5312.5	0.60	-4360.46
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1086.9	2031.4	0.68	6075.1	11219.5	1.27	-9188.10
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	65508.0	121455.1	40.82	61105.1	113247.0	12.79	8208.09
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	23881.4	44203.0	14.86	13172.1	24336.8	2.75	19866.27
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	16884.4	31015.9	10.42	63167.3	117148.6	13.24	-86132.71
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	977.6	1816.6	0.61	12122.3	22537.4	2.55	-20720.79
Սարքեր և ապարատներ	1218.1	2254.4	0.76	6646.4	12342.5	1.39	-10088.05
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	648.2	1189.5	0.40	6242.9	11571.5	1.31	-10382.03
Արվեստի ստեղծագործություններ	148.5	273.5	0.09	22.9	42.6	0.00	230.93

2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 40.8%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 14.86%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (որի շուրջ 45%-ը կազմում է ոչ թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը), 11.53%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 9.19%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 4.43%-ը՝ մանածագործական իրերը, 10.42%-ը՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 24.71%, հանքահումքային արտադրանքը՝ 20.54%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 12.79%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 13.24%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը՝ 9.31%:

Հարկ է նշել, որ 2000թ. հունվար-դեկտեմբերին արտահանման կառուցվածքում տեղի են ունեցել զգալի դրական տեղաշարժեր: Արտահանման ծավալում, առանց ոչ թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի արտահանման և դրսից բերված հումքի վերամշակումից ստացված ապրանքների վերաարտահանման ծավալների, գրանցվել է սեփական արտադրության ապրանքների արտահանման ծավալի զգալի աճ: Միայն սեփական արտադրության ապրանքների արտահանման ծավալը 2000թ. հունվար-դեկտեմբերին 1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատ աճել է մոտ 35.6 տոկոսով, այն դեպքում, երբ 1999 թ. այն նվազել էր 7.5 տոկոսով:

**Արտահանման ծավալի գրաֆիկական պատկերն առանց վերը նշված գործոնների
և դրանց առկայությամբ 1997-2000 թվականներին**

(մլն. դոլար)



2000թ. հունվար-դեկտեմբերին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն երեք ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 19866.3 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում՝ 8208.1 հազ.դոլար և արվեստի ստեղծագործությունների խմբում՝ 230.9 հազ. դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 188982.8 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 147492.8 հազ. դոլար:

Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը 2000թ. հունվար-դեկտեմբերին 1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ, ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	1999թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	231669.2	297523.5	128.43	811267.6	885128.4	109.10
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	544.9	689.4	126.52	41486.0	33574.8	80.93
Քուսական ծագման արտադրանք	1393.8	1681.8	120.67	75682.6	98498.3	130.15
Կենդանական և քուսական ծագման յուղեր և ճարպեր	10.2	0.3	3.15	18084.3	17082.8	94.46
Պատրաստի սննդի արտադրանք	15917.5	27337.3	171.74	76994.4	69535.6	90.31
Հանքահումքային արտադրանք	37953.3	34305.2	90.39	176040.7	181798.1	103.27
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1890.4	3373.3	178.44	71353.2	82382.1	115.46
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	9109.8	9048.9	99.33	23524.9	23151.8	98.41
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	987.8	1420.9	143.85	1449.7	1590.1	109.68
Փայտ և փայտյա իրեր	319.1	871.9	273.23	4021.9	4844.1	120.44
Թուղթ և թղթից իրեր	1041.3	418.6	40.20	18332.4	23059.1	125.78
Մանածագործական իրեր	13579.3	13184.4	97.09	30023.0	31853.4	106.10
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	986.7	952.1	96.49	5514.4	5312.5	96.34
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	756.6	2031.4	268.47	12788.5	11219.5	87.73
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	99879.2	121455.1	121.60	86712.2	113247.0	130.60

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	1999թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-դեկտեմբեր, հազ. \$	
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	24952.1	44203.0	177.15	23836.8	24336.8	102.10
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	17486.1	31015.9	177.37	86481.8	117148.6	135.46
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	2658.1	1816.6	68.34	33142.5	22537.4	68.00
Սարքեր և ապարատներ	1620.6	2254.4	139.11	12959.6	12342.5	95.24
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	317.4	1189.5	374.76	12812.0	11571.5	90.32
Արվեստի ստեղծագործություններ	264.9	273.5	103.26	26.8	42.6	158.78

1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատ արտահանման ծավալի աճ է տեղի ունեցել հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի (21.8%-ով, հիմնականում ադամանդի և ոսկերչական իրերի գծով), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի (78.4%-ով, հիմնականում դեղորայքի, սինթետիկ լաքերի և ներկերի, կարբոնաթթվի գծով), պատրաստի սննդի արտադրանքի (71.7%-ով, հիմնականում կոնյակի, գինիների, ծխախոտի, տոմատի մածուկի, ջեմերի գծով), մեքենաների և սարքավորումների (77.4%-ով, հիմնականում ուժային սարքավորումների և շարժիչների, հաստոցների, էլեկտրական սարքերի ղեկավարման վահանակների, մեկուսացված էլեկտրական հաղորդալարերի, գծով), սարքերի ու ապարատների(39.1%-ով, հիմնականում ավտոմատ ղեկավարման սարքերի, ժամացույցների գծով) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ, 9.6%-ով նվազել է հանքահումքային արտադրանքի, 2.9%-ով՝ մանածագործական իրերի արտահանումը:

1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ 1.31 անգամ աճել է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 1.3 անգամ բուսական ծագման արտադրանքի, 1.35 անգամ՝ մեքենաների և սարքավորումների ներմուծումը: Միևնույն ժամանակ, 9.7%-ով նվազել է պատրաստի սննդի արտադրանքի, 32.0%-ով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 4.8%-ով՝ սարքերի ու ապարատների, 1.6%-ով՝ պլաստմասսայի և դրանցից իրեր, կաուչուկի և ռետինե իրերի ներմուծումը: